ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հանքավան, (098) 888842, h.hakopyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 18

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանգրի 1.17-րդ կետի <<բ>> ենթակետի դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի մայիսի 17-ի N01/18.1/2963-17 հանձնարարականը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 2017 թվականի մայիսի 27-ին Հանքավան համայնքի տարածքում կազմակերպել և իրականացնել սանիտարական մաքրման, աղբահեռացման, կանաչապատման, բարեկարգման աշխատանքներ և միջոցառումներ:

2.Սանիտարական մաքրման միջոցառումներ անցկացնելու աշխատանքները համակարգելու, վերահսկելու և արդյունքները ամփոփելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Հ. Մարտիրոսյան – հանձնաժողովի նախագահ, Հանքավան համայնքապետարանի Աշխատակազմի քարտուղար

2) Մ.Հայրապետյան – հանձնաժողովի անդամ, Հանքավան համայնքապետարանի Գլխավոր մասնագետ--հաշվապահ

3) Ռ.Ղարիբյան – հանձնաժողովի անդամ, Հանքավան համայնքի ավագանու անդամ

3) Ն.Ավագյան– հանձնաժողովի անդամ, Հանքավան համայնքի բնակիչ

4) Ա. Մուրադով - հանձնաժողովի անդամ, Հանքավան համայնքի բնակիչ

2.Համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ սանիտարական միջոցառումների ընթացքում մաքրել, բարեկարգել, կանաչապատել իրենց կազմակերպությունների տարածքները և շրջակայքը:

3.Հանքավան համայնքի աշխատակազմի քրտուղար Հ. Մարտիրոսյանին՝ սանիտարական մաքրման աշխատանքների ընթացքի նկատմամբ սահմանել վերահսկողություն և կատարած աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:

4..Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՀԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ